

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ՍԵՎԱՆԱԼՃԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐԻ ԲԱՑԹՈՂՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ
ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ
ԲԱՇԽՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանները վերաբերում են ոռոգման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա որոշումներով ամրագրվող՝ Սևանա լճից ջրի բացթողման, հաշվառման և Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի հիդրոտեխնիկական կառույցներով բաշխման խնդիրների կանոնակարգմանը:

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՄԷԿ» ՓԲԸ) հիդրոէլեկտրակայանների (այսուհետ՝ ՀԷԿ) ջրամբարների և դերիվացիաների աշխատակարգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1605-Ն և 2004 թվականի փետրվարի 12-ի N 255-Ն որոշումների, ինչպես նաև «ՄԷԿ» ՓԲԸ-ի ՀԷԿ-երի՝ Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի հիդրոտեխնիկական կառույցներից սնվող (ջրառ իրականացնող) ոռոգման ջրանցքների գլխամասի ջրառի կարգավորման տեխնիկական պայմանների համաձայն՝ առաջնային համարելով ոռոգման նպատակով անխափան ջրամատակարարման ապահովման գործառույթը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության ամենամյա որոշումներով սահմանվող չափաբաժինների շրջանակներում ոռոգման նպատակով Սևանա լճից ջուրը բաց է թողնվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի կամ նրա կողմից տրված լիա-

գործությամբ՝ «Սևան-Հրազդանյան-ջրատ» ՓԲԸ-ի կողմից «ՄԷԿ» ՓԲԸ-ին և «Էլեկտրա-էներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին (այսուհետ՝ «ԷԷՀՕ» ՓԲԸ) ներկայացված հայտերով:

4. Ոռոգման շրջանի այն ժամանակահատվածում, երբ Սևանա լճից ոռոգման նպատակով ջուր բաց չի թողնվում, գետի բնական հոսքի օգտագործումն իրականացվում է «Սևան-Հրազդանյան-ջրատ» ՓԲԸ-ի հայտերով:

5. ՀԷԿ-երի դերիվացիաներից և ջրամբարներից ոռոգման նպատակով սույն պայմանների 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հայտերով (այսուհետ՝ հայտ) նախատեսված ջրի քանակությունը տրվում է «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի հրահանգով:

6. Համաձայն սույն պայմանների դրույթների՝

1) Սևանա լճից ջրի բացթողումը սկսվում է «Սևան» ՀԷԿ-ի ջրընդունիչի փականների կապարակնիքների հանումով, որը կատարվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, «Սևան-Հրազդանյան-ջրատ» ՓԲԸ-ի և «ՄԷԿ» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչների կողմից, որի մասին կազմվում է համապատասխան ակտ, որտեղ նշվում է կապարակնիքների հանման և փականների բացման օրը և ժամը: Սևանա լճից նախատեսված ծավալների բացթողման ավարտից հետո «Սևան» ՀԷԿ-ի ջրընդունիչի փականների կապարակնիքման աշխատանքներն իրականացվում են նույն հանձնախմբի անդամների մասնակցությամբ.

2) Սևանա լճից բաց թողնվող ջրի հաշվառումը կատարում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ), որը բնագավառի համար սահմանված կարգով ընդունված ձևի համաձայն՝ ամենօրյա տեղեկատվություն է տալիս Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը,

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին և «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ին.

3) Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնված ջրի քանակը որոշվում է «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի Գեղամավան ջրաչափական դիտակետում ըստ հաստատված մակարդակ-ելք կորի աստիճանավորման աղյուսակի: Բերուկայցման, մամռակալման կամ այլ տարբեր խնդիրներով պայմանավորված՝ աստիճանավորման աղյուսակից թույլատրելի շեղման (5 տոկոս) գերազանցման դեպքում դիտակետում իրականացվում է համատեղ՝ ստուգիչ ջրաչափություն՝ «Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ՋՌԿԳ-ի, «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի և «ՄԷԿ» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ: Նշված կազմակերպություններն անհրաժեշտության դեպքում իրավունք ունեն պահանջելու իրականացնել լրացուցիչ հսկիչ ջրաչափական աշխատանքներ:

7. «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ն՝

1) յուրաքանչյուր տարի ոռոգման շրջանը սկսվելուց 7 աշխատանքային օր առաջ «ՄԷԿ» ՓԲԸ-ին և «ԷԷՀՕ» ՓԲԸ-ին ներկայացնում է ոռոգման ջրանցքներում ջրի պահանջարկի կողմնորոշիչ ռեժիմներն ու չափաքանակները, ինչպես նաև Սևանա լճից բաց թողնվող ջրի քանակն՝ ամսական և տասնօրյակային կտրվածքներով՝ ամբողջ ժամանակաշրջանի համար.

2) ՀԷԿ-երի դերիվացիաներից ջուր վերցնելու տասնօրյա հայտերը «ԷԷՀՕ» ՓԲԸ-ին և «ՄԷԿ» ՓԲԸ-ին ներկայացնում է ոչ ուշ, քան 24 ժամ առաջ.

3) ՀԷԿ-երի դերիվացիաներից, ջրամբարներից, օրվա կարգավորման ավազաններից (այսուհետ՝ ՕԿԱ) սնվող ջրառներում ջրի քանակությունների փոփոխությունները կատարվում են «ՄԷԿ» ՓԲԸ-ի լիազոր ներկայացուցչի հետ համատեղ՝ կատարելով համապատասխան գրառումներ.

4) Հրազդան գետում ջրի բնական ելքի փաստացի քանակի փոփոխման կամ այլ պատճառներով ջրերի հաշվեկշիռների խախտումների դեպքում, 12 ժամ առաջ տեղեկացնելով «ԷԷՀՕ» ՓԲԸ-ին, կատարում է Սևանա լճից, ՀԷԿ-երի դերիվացիաներից և ջրամբարներից ջրի բացթողումների օպերատիվ ճշգրտումներ.

5) իրականացնում է վերահսկողություն ՀԷԿ-երի դերիվացիաներից և ջրամբարներից սնվող ջրառի կետերում ջրի բաշխման, վերաբաշխման և տրման օպերատիվ կարգավորման նկատմամբ.

6) վարարումներից հետո Կոտայքի ջրանցքի և Նաիրիի դոտացիոն դյուկերից հետո տեղադրում է դիմհարային պատնեշ՝ մինչև Արգել ՀԷԿ-ի ՕԿԱ-ն և ռոտզման ավարտից հետո հանում այն.

7) իրականացնում է վերահսկողություն այն ջրառների կետերի նկատմամբ, որոնք սնվում են՝

ա. անմիջապես ՀԷԿ-երի գլխամասային կառույցներից՝ «ՄԷԿ» ՓԲԸ-ի հետ համատեղ,
բ. դերիվացիոն կառույցներից և չեն պատկանում «ՄԷԿ» ՓԲԸ-ի գույքային համալիրին (ջրանցքներ, տեղաբաշխված սիֆոններ, խողովակներ և այլն).

8) «ՄԷԿ» ՓԲԸ-ի հետ բացահայտում է ապօրինի ջրառների կետերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ:

8. «ՄԷԿ» ՓԲԸ-ն՝

1) օրվա ընթացքում Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից ապահովում է ռոտզման ջրի բաշխումը ռոտզման ջրանցքներով՝ համաձայն հայտերի, «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի կարգավարի հրահանգով: Սևանա լճից ջրի բացթողումներն իրականացնում է հաստատուն ռեժիմով՝ «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող ռոտզման ջրանցքների գլխամասերում ջրառի չափաքանակների տատանումները բացառելու համար.

2) ոռոգման շրջանում ՀԷԿ-երում և հիդրոտեխնիկական կառույցներում կատարվող պլանային աշխատանքները, որոնք կարող են բերել Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ հայտերով և ոռոգման ջրանցքներով մատակարարվող ջրաքանակների սահմանափակման, համաձայնեցնում է «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի հետ՝ 10 օր առաջ.

3) անմիջապես տեղեկացնում է «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ին և «ԷԷՀՕ» ՓԲԸ-ին ոռոգման շրջանում ՀԷԿ-երում և հիդրոտեխնիկական կառույցներում տեղի ունեցած այն վթարային աշխատանքների մասին, որոնց հետևանքով տեղի է ունեցել ոռոգման ջրանցքներով տրվող կամ Սևանա լճից բաց թողնվող ջրերի սահմանված քանակների խախտում.

4) միջոցներ է ձեռնարկում «ՄԷԿ» ՓԲԸ-ի հիդրոտեխնիկական կառույցներում ջրի փաստացի կորուստները սահմանված չափաքանակին հասցնելու, ինչպես նաև Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքը բերուկացումից և մամռակալումից մաքրելու համար.

5) «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի հետ բացահայտում է ապօրինի ջրառների կետերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ:

9. «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ն աջակցում է «ՄԷԿ» ՓԲԸ-ի համակարգում ջրի փաստացի կորուստները համակարգի թույլատրելի տեխնիկական չափաքանակի հասցնելու համար:

10. «ԷԷՀՕ» ՓԲԸ-ն՝

1) «ՄԷԿ» ՓԲԸ-ի հիդրոտեխնիկական կառույցներից ջրառը ապահովում է՝ հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական շահագործման կանոնների համաձայն և ըստ «ՄԷԿ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների՝ համաձայն «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ի կողմից տվյալ ժամանակահատվածի համար տրված հայտերի պահանջների.

2) Արգել ՀԷԿ-ում՝

ա. ապահովում է Ախպարայի ջրամբարի մակարդակը առնվազն 1692.00 մ նիշի վրա, որից ցածր լինելու դեպքում տղմակալումից խուսափելու համար դերիվացիոն ջրանցքով թույլատրվում է ջուր բաց թողնել բնական ելքից ոչ ավելի (Մարմարիկ գետ՝ Հրազդան-Հրազդան դիտակետ + Սևանա լճի ջրի ելք – Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթևք), եթե այն չի հակասում համապատասխան ջրօգտագործման թույլտվության պայմաններին,

բ. ապահովում է ՕԿԱ-ի նվազագույն մակարդակը 480 սմ (ճնշումային խցի նշաձողով)։

3) Արգնի ՀԷԿ-ում՝

ա. ապահովում է Արգելի ջրամբարի մակարդակը առնվազն 1364.00 մ նիշի վրա, եթե այն չի հակասում համապատասխան ջրօգտագործման թույլտվության պայմաններին,

բ. թույլատրում է Հրազդան գետի հուն (սանիտարական ելք) ջուր բաց թողնել Արգելի ջրամբարի 1367.00 մ և ավելի մակարդակի դեպքում՝ սահքեթափով, եթե այն չի հակասում համապատասխան ջրօգտագործման թույլտվության պայմաններին։

4) Քանաքեռ ՀԷԿ-ում ՕԿԱ-ի մակարդակը պահպանում է առնվազն 1224.19 մ նիշի վրա (ըստ նշաձողի՝ -1.5 մ)։

5) Երևան ՀԷԿ-1-ում ջրամբարի ջրի սահմանային մակարդակը պահպանում է առնվազն 1051.50 մ նիշի վրա: Ջրի հոսքը ՀԷԿ-ի հիդրոագրեգատների աշխատանքների պարապ ընթացքի ծախսից (3.6մ³/վրկ) փոքր կամ հավասար լինելու դեպքում ջրառը կազմակերպում է գետի հունով, եթե այն չի հակասում համապատասխան ջրօգտագործման թույլտվության պայմաններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ